# Վալլետտա ՍՊԸ

## Կառավարման մարմինների

## 2009-ի առաջին կիսամյակի

## միջանկյալ զեկույց

Իրավաբանական հասցե՝ ՀՀ ք.Կապան Բաղաբերդ թաղ. Շենք 2Ա բն.2
Գործունեության հասցե՝ ՀՀ ք. Երևան, Աէրացիա 1
Հեռախոս՝ (374 10) 46 74 10
Ֆաքս՝ (374 10) 46 74 00
Էլ. Փոստ՝ valletta@valletta.am
Ինտերնետային կայք՝ www.valletta.am

# Բովանդակություն

**1. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը** .......... 3

1.1. 2009 թ. առաջին կիսամյակի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը .......... 3

1.2. Հաջորդ հաշվետու շրջանում Ընկերության ձնակերպված ռիսկերի և անորոշությունների նկարագիրը .......... 5

1.3. Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության զարգացման նկարագիրը .......... 6

**2. Հավելված 1– Ֆինանսական հաշվետվություն 2009 թ. առաջին եռամսյակի համար** .......... 7

2.1. Հաշվապահական հաշվեկշիռ առ 30/06/09 .......... 7

2.2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն - 2009թ. առաջին կիսամյակ .......... 9

2.3. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ - 2009թ. առաջին կիսամյակի .......... 10

# 1. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը

## 1.1. 2009 թ. առաջին կիսամյակի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը իրականացրեց իր զարգացման ռազմավարական ծրագրի II փուլի գործողությունները: Այդ ծրագրի շրջանակներում Ընկերությունը 2009 թ. փետրվարին դադարեցրեց արագ սննդի և ժամանցային ծառայությունների սեգմենտի գործունեությունը՝ ֆոկուսելով ռեսուրսները իր հիմնական գործունեության՝ առևտրի վրա: Վերը նշված սեգմենտի ակտիվները տեղափոխվեցին փոխկապակցված անձ հանդիսացող մասնագիտացված "Ֆոնդեքս" Ընկերությանը:

Արագ սննդի և ժամանցային ծառայությունների սեգմենտի դադարեցման արդյունքում Ընկերության հիմնական միջոցները նվազեցին մոտ 130.4 մլն. դրամով որից 87.3 մլն. դրամի գույքը իրենից ներկայացնում էր շահագործման չհանձնված սարքավորումներ /տես հավելված 1 բաժին 2.3/: Դադարեցված սեգմենտի հասույթը 2009թ. առաջին երկու ամսվա կտրվածքով կազմեց 110 մլն դրամ, որը ներառված չէ 2009թ. առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունների Հասույթ հոդվածում /տես հավելված 1/:

Ընկերության որոշ ծրագրեր վերանայվեցին՝ ֆինանսական և սպառողական շուկաներում ճգնաժամի ունեցած հետևանքները Ընկերության համար մեղմելու նպատակով: Մասնավորապես վերանայվեց ներկրվող ապրանքների ցանկը՝ հիմնական շեշտը դնելով առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների վրա: Դրանց շարքում հայտնվեցին.

- սննդի ցանկում՝ բրինձը, ձավարեղենը, կարագը, պահածոյացված բանջարեղենը, նրբերշիկը և թռչնամիսը
- կենցաղային տեխնիկայի ցանկում՝գազի կաթսաները և ջրատաքացուցիչները

Ներկրման վերանայված ծրագրերի արդյունքում նվազեցին ծավալները: Արագ սննդի և ժամանցային սեգմենտի շտկումներից հետո հասույթի փոփոխությունը 2009-ի առաջին և երկրորդ քառորդում կազմել է համապատասխանաբար -50%, իսկ երկրորդում՝ +10%:

Սուրճի և թեյի արտադրության զարգացման ծրագրերը չեն վերանայվել:

Հաշվետու ժամանակահատվածում ազգային արժույթի կտրուկ արժեզրկման հետևանքով Ընկերությունը գրանցեց մոտ 245 մլն. դրամի կորուստ՝ արտարժույթով վերցրած վարկերի վերագնահատման արդյունքում: Հարկ է նշել սակայն, որ Ընկերության վարած պահպանողական արտարժութային քաղաքականության արդյունքում վերագնահատման կորուստները բացարձակ

թվով մոտ 30% –ով փոքր եղան 2007թ.[1] դրամի նույնչափ արժեզրկման ժամանակ գրանցած եկամուտներից:

Ընկերության ներդրումային գործունեության շրջանակներում 2009թ. մարտ ամսին 7,350 մլն. դրամով ձեռք բերվեց "Թայմ Զիրոու" ՍՊԸ-ի 98% բաժնեմասը: "Թայմ Զիրոու" ՍՊԸ-ն գործում է ՀՀ անշարժ գույքի շուկայում և գրանցված է ՀՀ, ք. Կապան, փ. Հ. Ավետիսյան 24, բն. 3 հասցեում:

Ֆինանսական ոլորտի ճգնաժամը անդրադարձավ նաև Ընկերության ֆինանսավորման աղբյուրների վրա: Գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների հետ վարկային պայմանները վերանայվեցին, ձեռք բերվեցին փոխշահավետ համաձայնություններ: Բանակցությունների արդյունքում Ընկերությունը 2008 թ. տարեվերջի համեմատ նվազեցրեց վարկային բեռը շուրջ 930 մլն. դրամով[2] /տես պատկեր 1/

Պատկեր 1. Ընկերության վարկային պարտավորությունների դինամիկան




Հակաճգնաժամային ծրագիրը ներառեց նաև որոշակի վարչական և ընդհանուր ծախսերի օպտիմիզացիա, որի արդյունքում 2009թ.-ի առաջին կիսամյակում նախորդ կիսամյակի համեմատ գրանցվեց այդ հոդվածներով 20% նվազեցում:

[1] 2007-ը համեմատական ժամանակաշրջանի սկիզբ է ընտրված, քանի որ 2007 -ի սկզբում գրանցվել է 2009 մարտի ԱՄԴ Դոլար/ ՀՀ Դրամ միջին 365 փոխարժեքին համապատասխան մակարդակ:

[2] Բացարձակ նվազեցումը /առանց հաշվի առնելու վերագնահատման տարբերությունը/ կազմել է 730 մլն.

## 1.2. Հաջորդ հաշվետու շրջանում Ընկերության ձնակերպված ռիսկերի և անորոշությունների նկարագիրը

Ընկերությունը իր գործունեության ընթացքում առնչվում է տարբեր ռիսկային գործոնների հետ, որոնցից 2009-ի երկրորդ կիսամյակի համար Ընկերությունը առանձնացնել է հետևյալ առավել կարևորները.

*Շուկայական ռիսկ*. Շուկայական ռիսկը կապված է շուկայական գների տատանման հետ, ինչը կարող է ազդել ինչպես երկրի տնտեսության, այնպես էլ Ընկերության եկամուտների վրա: Ընկերությունը շուկայական ռիսկի գնահատման և զսպման նպատակով կատարում է երկրի տնտեսության իրական հատվածի մշտական վերլուծություն:

*Արտարժութային ռիսկ*. Ընկերության գործառնությունների մեծ մասն իրականացվում է արտարժույթով, հետևաբար արտարժութային փոխարժեքների զգալի տատանումները կարող են մեծ ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա (ինչպես դրական, այնպես էլ բացասական):

## 1.3. Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության զարգացման նկարագիրը

Հաշվի առնելով տնտեսության զարգացման տեմպերի ոչ բարենպաստ կանխատեսումները մոտակա 1-2 տարվա համար, Ընկերության գործունեությունը շարունակելու է լինել պահպանողական քաղաքականության համաձայն, ձեռնպահ մնալով նոր և առավել ռիսկային ծրագրերի իրագործումից:

Ընկերությունը շարունակելու է կենտրոնացնել ռեսուրսները գործունեության հիմնական մասի՝ պարենային ապրանքների ներմուծման և մեծածախ իրացման վրա: Կատարված վերադիրքավորման պարագայում այդ ոլորտների զգայունությունը գնողունակ պահանջարկի անկման նկատմամբ ակնկալվում է, որ լինի նվազագույնը:

Տվյալ ժամանակահատվածում Ընկերությունը շեշտը դնելու է հետևյալ ռազմավարական խնդիրների լուծմանը.

- կառավարման որակի բարելավում, ներառյալ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը, ներքին հսկողության և կառավարչական հաշվետվությունների համակարգի բարելավումը:

- ծախսերի օպտիմիզացիա, որոնց շնորհիվ Ընկերությունը կնվազեցնի վաճառվող ապրանքների/արտադրանքի ինքնարժեքը և վերադիր ծախսերը, միաժամանակ բարձրացնելով շահութաբերության մակարդակը: Տվյալ ուղղությամբ հնարավոր գործողություններից են i) գնումների կենտրոնացված համակարգի ներդրումը, ii) աշխատանքի վարձատրության համակարգի վերանայումը՝ կապելով այն կոնկրետ աշխատակցի և/կամ Ընկերության ֆինանսական արդյունքներից և iii) որոշակի ծախսերի կրճատումը:

- նոր մատակարարների և ապրանքատեսակների բացահայտումը, որի շնորհիվ հնարավոր կլինի առավել մրցունակ գներով ներմուծել ապրանքներ և պահպանել հասույթների և շահութաբերության անհրաժեշտ մակարդակը : Միաժամանակ նախապատվությունը տրվելու է առավել իրացվելի ապրանքների ներմուծմանը:

- իրացման ցանցի ընդլայնումը, ի հաշիվ Ընկերության հետ առ այսօր չհամագործակցող մեծածախ և մանրածախ ընկերությունների հետ համագործակցության, այդ թվում նաև մարզերում:

## 2. Հավելված 1– Ֆինանսական հաշվետվություն 2009 թ. առաջին եռամսյակի համար

### 2.1. Հաշվապահական հաշվեկշիռ առ 30/06/09

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **I. Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 224,796 | 115,165 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 5,394 | 4,903 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 040 | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | 105,221 | 97,993 |
| | 071 | 105,221 | 97,993 |
| | 072 | | |
| | 073 | | |
| | 074 | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **080** | **335,411** | **218,061** |
| **II. Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Նյութեր | 090 | 78,041 | 73,893 |
| Աճեցվող և բտվող կենդանիներ | 100 | | |
| Արագամաշ առարկաներ | 110 | 847 | 520 |
| Անավարտ արտադրություն | 120 | | |
| Արտադրանք | 130 | 33,761 | 42,903 |
| Ապրանքներ | 140 | 746,037 | 529,668 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 402,232 | 617,643 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 161,946 | 265,909 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 184,668 | 127,280 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | 3,388,002 | 7,794,776 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 200 | 462,273 | 52,244 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | 1,735,553 | 21,832 |
| | 211 | | |
| առհաշիվ տրված գումարներ | 212 | 1,709,175 | |
| այլ | 213 | 26,378 | 21,832 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **220** | **7,193,360** | **9,526,668** |
| **Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ** | **230** | **7,528,771** | **9,744,729** |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **III. Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 1,600,000 | 1,600,000 |
| Էմիսիոն եկամուտ | 250 | 38,000 | 38,000 |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 260 | | |
| Կուտակված շահույթ | 270 | 41,242 | -367,376 |
| Պահուստային կապիտալ | 280 | 13,762 | 13,762 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | 290 | 0 | 0 |
| | 291 | | |
| | 292 | | |
| | 293 | | |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **300** | **1,693,004** | **1,284,386** |
| **IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 310 | 2,770,199 | 2,684,817 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 340 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 350 | 0 | 0 |
| | 351 | | |
| | 352 | | |
| | 353 | | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **360** | **2,770,199** | **2,684,817** |
| **V. Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | 1,313,394 | 668,946 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 913,941 | 1,765,442 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 298,649 | 3,188,298 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 490,895 | 106,477 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 34,058 | 38,792 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | | 989 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 14,130 | 6,087 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 501 | 495 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 460 | | |
| Ընթացիկ պահուստներ | 470 | | |
| Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 480 | 0 | 0 |
| | 481 | | |
| | 482 | | |
| | 483 | | |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | 490 | **3,065,568** | **5,775,526** |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 7,528,771 | 9,744,729 |

## 2.2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն - 2009թ. առաջին կիսամյակ

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 2,170,289 | 1,252,501 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (1,696,678) | (1,038,771) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 473,611 | 213,730 |
| Իրացման ծախսեր | 040 | (180,037) | (36,075) |
| Վարչական ծախսեր | 050 | (146,338) | (94,948) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 147,236 | 82,707 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում` | 070 | **13,525** | **62,939** |
| | 071 | 13,525 | 62,939 |
| | 072 | | |
| | 073 | | |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում` | 080 | **(172,505)** | **(50,652)** |
| | 081 | (172,505) | (50,652) |
| | 082 | | |
| | 083 | | |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | **(11,744)** | **94,994** |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (283,598) | -252,975 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | 110 | | |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս) | 120 | 152,074 | (51,208) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում` | 130 | 21,986 | (199,429) |
| | 131 | 21,986 | (199,429) |
| | 132 | | |
| | 133 | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | (121,282) | (408,618) |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 150 | | |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | (121,282) | (408,618) |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | | |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | (121,282) | (408,618) |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)* | 190 | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)* | 200 | | |

## 2.3. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ - 2009թ. առաջին կիսամյակի

Հիմնական միջոցներ

| Դասի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջին մնացորդը | Ավելացում | | Նվազեցում | | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | այդ թվում՝ վերագնա-հատումից | ընդամենը | այդ թվում՝ վերագնա-հատումից | |
| 1 | 2 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| **Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ** | | | | | | | |
| **Շենքեր** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 010 | | | | | | |
| արժեք | 011 | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 012 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 013 | | | | | | |
| **Կառուցվածքներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 020 | | | | | | |
| արժեք | 021 | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 022 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 023 | | | | | | |
| **Փոխանցող հարմարանքներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 030 | | | | | | |
| արժեք | 031 | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 032 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 033 | | | | | | |
| **Մեքենաներ և սարքավորումներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 040 | 22,375 | -4,729 | | 1,659 | | **15,987** |
| արժեք | 041 | 49,065 | | | 4,515 | | **44,550** |
| կուտակված մաշվածություն | 042 | 26,690 | 4,729 | | 2,856 | | **28,563** |
| կուտակված արժեզրկում | 043 | | | | | | |
| **Տրանսպորտային միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 050 | 61,451 | -10,602 | | 2,506 | | **48,343** |
| արժեք | 051 | 155,951 | | | 4,468 | | **151,483** |
| կուտակված մաշվածություն | 052 | 94,500 | 10,602 | | 1,962 | | **103,140** |
| կուտակված արժեզրկում | 053 | | | | | | |
| **Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 060 | 5,894 | -314 | | 4,263 | | **1,317** |
| արժեք | 061 | 16,785 | 148 | | 7,237 | | **9,696** |
| կուտակված մաշվածություն | 062 | 10,891 | 462 | | 2,974 | | **8,379** |
| կուտակված արժեզրկում | 063 | | | | | | |
| **Բազմամյա տնկարկներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 070 | | | | | | |
| արժեք | 071 | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 072 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 073 | | | | | | |
| **Բանող և մթերատու անասուններ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 080 | | | | | | |
| արժեք | 081 | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 082 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 083 | | | | | | |
| **Այլ հիմնական միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 090 | 5,753 | -529 | | 807 | | **4,417** |

| Դասի անվանումը | տող | Նախորդ տարվա վերջին մնացորդը | Ավելացում | | Նվազեցում | | Հաշվետու տարվա (ժամանակա-շրջանի) վերջի մնացորդը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | այդ թվում՝ վերագնա-հատումից | ընդամենը | այդ թվում՝ վերագնա-հատումից | |
| 1 | 2 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| արժեք | 091 | 12,625 | 437 | | 2,538 | | **10,524** |
| կուտակված մաշվածություն | 092 | 6,872 | 966 | | 1,731 | | **6,107** |
| կուտակված արժեզրկում | 093 | | | | | | |
| **Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 100 | 95,473 | -16,174 | 0 | 9,235 | 0 | 70,064 |
| արժեք | 101 | 234,426 | 585 | 0 | 18,758 | 0 | 216,253 |
| կուտակված մաշվածություն | 102 | 138,953 | 16,759 | 0 | 9,523 | 0 | 146,189 |
| կուտակված արժեզրկում | 103 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ** | | | | | | | |
| **Շահագործման չհանձնված հիմնական միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 110 | 129,323 | 3,078 | | 87,300 | | **45,101** |
| արժեք | 111 | 129,323 | 3,078 | | 87,300 | | **45,101** |
| կուտակված արժեզրկում | 113 | | | | | | |
| **Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 120 | | | | | | |
| արժեք | 121 | | | | | | |
| կուտակված մաշվածություն | 122 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 123 | | | | | | |
| **Շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 130 | | | | | | |
| արժեք | 131 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 133 | | | | | | |
| **Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 140 | 129,323 | 3,078 | 0 | 87,300 | 0 | 45,101 |
| արժեք | 141 | 129,323 | 3,078 | 0 | 87,300 | 0 | 45,101 |
| կուտակված մաշվածություն | 142 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| կուտակված արժեզրկում | 143 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Հողամասեր** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 150 | | | | | | |
| արժեք | 151 | | | | | | |
| կուտակված արժեզրկում | 153 | | | | | | |
| **Ընդամենը հիմնական միջոցներ** | | | | | | | |
| հաշվեկշռային արժեք | 160 | 224,796 | -13,096 | 0 | 96,535 | 0 | 115,165 |
| արժեք | 161 | 363,749 | 3,663 | 0 | 106,058 | 0 | 261,354 |
| կուտակված մաշվածություն | 162 | 138,953 | 16,759 | 0 | 9,523 | 0 | 146,189 |
| կուտակված արժեզրկում | 163 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

Ֆինանսական արդյունքների հաշվետվություն՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշր ջան) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակա-շրջան) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի ,ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 2,258,387 | 1,252,501 |
| Գործառնական այլ եկամուտներ | 020 | 13,525 | 62,939 |
| Պատրաստի և անավարտ արտադրության մնացորդի փոփոխություն | 030 | 243,217 | -207,227 |
| Այլ կապիտալացված ծախսումներ | 040 | | |
| Օգտագործված հումք և նյութեր | 050 | (372,581) | (4,066) |
| Անձնակազմի գծով ծախսումներ | 060 | (150,561) | (89,570) |
| Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսումներ | 070 | (50,026) | (29,546) |
| Գործառնական այլ ծախսումներ և ծախսեր | 080 | (1,943,609) | (890,037) |
| Գործառնական շահույթ(վնաս) | 090 | (1,648) | 94,994 |
| Ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս) | 100 | (119,634) | (503,612) |
| Սովորական գործունեությունից շահույթ | 110 | (121,282) | (408,618) |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | 120 | | |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 130 | (121,282) | (408,618) |
| Շահութահարկի գծով ծախս | 140 | | |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 150 | (121,282) | (408,618) |

ՀՀ ք. Կապան Բաղաբերդ թաղ. շենք 2Ա բն. 2
Հեռ: (374-10) 467410 Ֆաքս: (374-10) 467400
Էլ. փոստ: valletta@valletta.am
HSBC բանկ Հայաստան ՓԲԸ Հ/Հ 002-060283-001
ՀՎՀՀ 09416197

*28.09.2009թ.*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ կառավարման մարմինների

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2009թ.-ի առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ /այսուհետ՝ Ընկերություն/ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

Խորհրդի նախագահ՝ Հենրիկ Զախարյանց
(ստորագրություն)

Խորհրդի անդամ,
Տնօրեն՝ Շահեն Ստեփանյան
(ստորագրություն)

Խորհրդի անդամ,
Փոխտնօրեն՝ Հովիկ Զախարյանց
(ստորագրություն)

Խորհրդի անդամ,
Գլխավոր հաշվապահ՝ Արթուր Մարտիրոսյան
(ստորագրություն)

Խորհրդի անդամ,
Ֆինանսների կառ. բաժնի պետ Ալեքսանդր Հարությունյան
(ստորագրություն)

«ՎԱԼԼԵՏՏԱ»
«ВАЛЛЕТТА»
«VALLETTA»
09416197